

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Ն. ԲԱԲԱՅԱՆ

Բնակչության սոցիալական պաշտպանությունը ցանկացած քաղաքակիրթ հասարակության կարևորագույն տարրն է: Սոցիալական պաշտպանությունն անելով՝ լայն իմաստով հասկանում ենք պետության այնպիսի քաղաքականությունը, որն ուղղված է անձի տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ իրավունքների, ազատությունների, շահերի ապահովմանը<sup>1</sup>: Ավելի նեղ իմաստով՝ սոցիալական պաշտպանությունը կոչված է ապահովելու քաղաքացիների կյանքի համար անհրաժեշտ նվազագույն միջոցներ ունենալու, առողջությունը պահպանելու, ինչպես նաև ծերության, հիվանդության, հաշմանդամության դեպքում սոցիալական ապահովածություն ունենալու իրավունքները<sup>2</sup>: Այդ իրավունքները պետությունը մասամբ իրականացնում է քաղաքացիների կենսաթոշակային ապահովության ծրագրերի մշակմամբ և կենսագործմամբ:

Հայաստանում շուկայական հարաբերությունների անցման փուլում քաղաքացիների կենսաթոշակային ապահովության համակարգի նորացման և կատարելագործման խնդիրը դառնում է էլ ավելի կարևոր և արդիական: Ծերերի թվի աճը, ֆինանսական միջոցների սահմանափակությունը, սոցիալական ապահովության նախկին մոտեցումների անկիրառելիությունը և մի շարք այլ գործոնների առկայությունը ինքնըստիներյան վկայում են քաղաքացիների կենսաթոշակային ապահովության ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտության մասին: Սույն հոդվածի նպատակն է պարզաբանել, թե որն է կենսաթոշակային ապահովության բարեփոխումների բովանդակությունը, բարեփոխումների որ արդյունքներն արդեն հնարավոր է առանձնացնել, որն է, ընդհանրապես, սոցիալական քաղաքականության ռազմավարությունը կենսաթոշակային ապահովության ոլորտում: Բարեփոխումների իրավիճակը ուսումնասիրելու նպատակով կիրառվել է փաստաթղթերի վերլուծման ավանդական մեթոդը: Վերլուծության օբյեկտը ՀՀ սոցիալական օրենսդրությունն է, ավելի ճիշտ՝ օրենսդրորեն ընդունված և արդեն իրականացվող այն միջոցառումները, որոնք վերաբերում են քաղաքացիների կենսաթոշակային ապահովման ոլորտին:

Սոցիալական օրենսդրությունը պետության կողմից երկրի քաղաքացիների սոցիալական պաշտպանության քաղաքականության իրացման կարևոր տարրն է: Հարկ է նշել, որ կենսաթոշակային ապահովության որոշ դրույթներ, որոնք ծառանգվել են խորհրդային սոցիալական ապահովության համակարգից, ըստ էության մնացել են անփոփոխ: Օրինակ, ինչպես նախկինում, այժմ ևս քաղաքացիները պետական կենսաթոշակային ապահովության իրավունքը ձեռք են բերում համապատասխան կենսաթոշակային տարիքի հասնելու, որոշակի աշխատանքային ստաժ ունենալու, հաշմանդամ դառնալու, անաշխատունակ անդամներ ունեցող ընտանիքի կերակրողին կորցնելու, որոշակի պայ-

<sup>1</sup> Տե՛ս **T. C. Пантелева, Г. А. Червякова, Экономические основы социальной работы**, М., 2000, էջ 32:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 33:

մաններում աշխատանքային հատուկ գործունեություն ծավալելու դեպքերում:

Կենսաթոշակների տեսակները նույնպես մնացել են անփոփոխ: «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում են պետական հետևյալ կենսաթոշակները.

«1. աշխատանքային կենսաթոշակներ, այդ թվում՝ տարիքային (ծերության և արտոնյալ պայմաններով), հաշմանդամության, կերակրողին կորցնելու, երկարամյա ծառայության,

2. սոցիալական կենսաթոշակներ, այդ թվում՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու»<sup>3</sup>:

Հարկ է նշել, որ Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական համակարգային փոփոխությունները չէին կարող չանդրադարձաբար սոցիալական ոլորտում տարվող քաղաքականության և վերջինս կարգավորող օրենսդրական մեխանիզմների վրա: Այդ կապակցությամբ նպատակահարմար է դիտարկել կենսաթոշակային ապահովությունը կարգավորող այն նոր և փոփոխված դրույթները, որոնք տեղ են գտել սոցիալական օրենսդրության մեջ:

Նախ և առաջ պետք է խոսել տնտեսավարման շուկայական մեթոդներին սոցիալական օրենսդրության հարմարեցման փաստի մասին: Դա առաջին հերթին վերաբերում է կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրներին: Խորհրդային սոցիալական ապահովման համակարգի օրոք կենսաթոշակների ֆինանսավորումը կատարվում էր պետական և հասարակական միջոցների հաշվին: Սոցիալական ֆոնդերի ձևավորմանը իրենք՝ աշխատավորները, ուղղակիորեն որևէ մասնակցություն չէին ունենում<sup>4</sup>: Այժմ սոցիալական օրենսդրությունը նախատեսում է կենսաթոշակային ապահովման ֆինանսավորման աղբյուրների անհամեմատ լայն շրջանակ, որպիսիք են.

«ա) գործատուների կողմից աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ընդհանուր գումարի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումները.

բ) քաղաքացիների աշխատավարձից կատարվող սոցիալական ապահովագրության պարտադիր վճարումները,

գ) ինքնուրույն աշխատանքով զբաղված անձանց, այդ թվում անհատ ձեռներեցների, գյուղացիական տնտեսության, գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղվածների սոցիալական ապահովագրության պարտադիր վճարումները, որոնց չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

դ) պետական բյուջեի միջոցները,

ե) ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի ինքնուրույն ֆինանսատնտեսական գործունեությամբ ձեռք բերված ազատ միջոցները, որի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենքով,

զ) ֆիզիկական և իրավաբանական անձանց կամավոր ներդրումները և օրենքով չարգելված այլ մուտքեր»<sup>5</sup>:

Հատկանշական է, որ ֆինանսավորման աղբյուրների ընդլայնումը բխում է ոչ միայն շուկայական հարաբերությունների բնույթից, այլև այն բանից, որ միայն պետությունն օրյեկտիվորեն ի վիճակի չէ ապահովելու սոցիալական ապահովության անհրաժեշտ ծախսերը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, այսօր արդեն սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը հիմնականում հավաքագրվում է գործատուների և աշխատողների պարտադիր սոցիալական վճարումների շնորհիվ: Բացի այդ, օրենսդրությամբ նախատեսվում է գործատուների ֆինանսական բեռի նվազեցման և, ընդհակառակը, համապատասխանաբար՝ աշխատողների սոցիալական մուծումների բաժնի և չափի

<sup>3</sup> «ՀՀ Սոցիալական օրենսդրություն», Եր., 1997, էջ 4:

<sup>4</sup> Տե՛ս **В. С. Андреев**, Социальное обеспечение в СССР, М., 1961, էջ 11:

<sup>5</sup> «ՀՀ Սոցիալական օրենսդրություն», էջ 5-6:

ավելացման միտում: Նման միջոցները կոչված են բարձրացնելու աշխատողների պատասխանատվությունն ու մասնակցությունը կենսաթոշակային ապահովման (կենսաթոշակային նպաստի) ֆինանսավորման գործում:

Շուկայական հարաբերությունների պայմաններին սոցիալական օրենսդրության հարմարեցման փաստը ամրագրում է նաև լրացուցիչ կենսաթոշակ ստանալու քաղաքացիների իրավունքը: Այսպես, համաձայն «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ սահմանված պետական կենսաթոշակային ապահովման հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները իրավունք ունեն նաև լրացուցիչ կենսաթոշակային ապահովման պայմանագրեր կնքելու պետական և ոչ պետական ապահովագրական կազմակերպությունների հետ: Նմանօրինակ նորամուծությունը վկայում է, որ պետությունը ձգտում է աստիճանաբար արմատավորել սոցիալական պաշտպանության այլընտրանքային ձևերի գաղափարը: Տվյալ դեպքում խոսքը հանրապետության քաղաքացիներին այլընտրական կենսաթոշակային ապահովման հնարավորություն ընձեռելու մասին է՝ հիմնված անձնական պատասխանատվության սկզբունքի վրա: Կենսաթոշակային ապահովման նման ձևը լայնորեն տարածված է արևմուտքում: Իր բնույթով այդ ձևը բավական մոտ է խնայողական բանկերում անձնական հաշիվներ ունենալու գաղափարին, ըստ որի յուրաքանչյուր աշխատողի պաշտպանության ծավալը, այսինքն՝ կուտակված միջոցների ծավալը, կախված է նրա կատարած անհատական ներդրումից:

Սակայն, պետք է նշել, որ բարեփոխումների ընթացքն առ այսօր չի վկայում քաղաքացիների կողմից լրացուցիչ կենսաթոշակի իրավունքի իրականացման որևէ էական փաստի մասին: Այսօր Հայաստանում (թե՛ կարճաժամկետ և թե՛ միջնաժամկետ հեռանկարով) առկա են կենսաթոշակային ապահովման այլընտրանքային ձևերի ներդրումը խոչընդոտող որոշ հանգամանքներ, մասնավորապես.

- թույլ է զարգացած ապահովագրման մասնավոր ոլորտը և գործնականում բացակայում է ապահովագրման կուլտուրան,

- մասնավոր ընկերություններն ու բանկերը բավականաչափ վստահություն չեն վայելում բնակչության՝ որպես պոտենցիալ ավանդատուի լայն զանգվածների մեջ,

- պետությունն ի վիճակի չէ ապահովելու բնակչության ավանդների պաշտպանությունը ապահովագրական ընկերությունների կողմից հնարավոր խաբեություններից, նրանց փլուզումից կամ սնանկացումից:

Կենսաթոշակային ապահովության այլընտրանքային ձևերի զարգացման ճանապարհին ամենամեծ խոչընդոտը, հավանաբար, բնակչության վստահության բացակայությունն է: Ոչ վաղ անցյալի բացասական փորձը՝ կապված մասնավոր խնայքանկերի, ընկերությունների, ֆիրմաների սնանկացման հետ, կասկածի տակ է դնում ապահովագրության մասնավոր ոլորտի զարգացումը: Այս դեպքում, պետության կողմից բնակչության ներդրումների պաշտպանության երաշխավորումը կարող է զգալի խթան հանդիսանալ ապահովագրական ինստիտուտի զարգացման համար:

Սոցիալական օրենսդրության կարևոր նորույթն է և այն, որ նախատեսվում է անցնել քաղաքացիների ապահովագրական մուծումների անհատական հաշվառման համակարգին: Վերջինս լայնորեն տարածված է շուկայական տրնստեություն ունեցող շատ երկրներում, որտեղ կատարվում է աշխատող քաղաքացիների մասին տեղեկությունների խստիվ հաշվառում՝ հետագայում այն օգտագործելով նաև կենսաթոշակներ նշանակելու, ինդեքսավորելու և վճարելու նպատակով<sup>6</sup>: Այդ հաշվառումը կատարվում է ամբողջ ապահովագրական ժա-

<sup>6</sup> Տե՛ս P. J. Ferrara, Social Security, Cato Institute Press, 1980, էջ 352:

մանակաշրջանի (ստաժի) ընթացքում՝ սկսած աշխատանքի առաջին օրվանից: Նման համակարգի ներդրումը կարող է դրական արդյունք ունենալ նաև Հայաստանում: Նախ և առաջ հնարավոր կլինի տեղեկատվական բազա ստեղծել աշխատողների աշխատանքային ստաժի և աշխատավարձի մասին, քանի որ աշխատանքային գրքույկները միշտ չէ, որ պարունակում են բավարար և ճշգրիտ տեղեկություններ աշխատողի աշխատանքային գործունեության մասին: Ավելին, կասկած է հարուցում այդ փաստաթղթերի (ջինձու, կեղծ տեղեկանքներ և աշխատանքային գրքույկներ) տեղեկատվության հավաստիությունը և այն հանգամանքը, որ դրանք պահվում են գործատուների մոտ, իսկ ապահովագրության հիմնադրամի համար այդ տեղեկությունները մատչելի չեն: Անհատական հաշվառման համակարգը հնարավորություն կտա ապահովել աշխատանքային ստաժի և աշխատավարձի վերաբերյալ քաղաքացիներից ստացվող տեղեկությունների հավաստիությունը:

Անհատական հաշվառման համակարգի ներդրումը կարելի է դիտել նաև որպես մարտավարական քայլ սոցիալական ապահովագրության ոլորտում բարեփոխումների իրականացման ճանապարհին: Ըստ էության, դեռ գործող սոցիալական ապահովագրման մեխանիզմի շրջանակներում կենսաթոշակների ֆինանսավորումը իրականացվում է «կաթսայի» սկզբունքով: Արդյունքը լինում է այն, որ թե՛ ոչ մեծ աշխատանքային ստաժ ունեցողը, թե՛ վտանգավոր պայմաններում աշխատողը և թե՛ 25-30 և ավելի տարիներ աշխատած մարդը կենսաթոշակ են ստանում միևնույն սոցիալական ֆոնդից: Ծուկայական պայմաններում այդպիսի համակարգը արդյունավետ չի կարող լինել, քանի որ չի երաշխավորում սոցիալական արդարության սկզբունքի իրականացումը: Ըստ այդմ, սոցիալական ապահովագրության բարեփոխումները պետք է ուղղված լինեն այնպիսի մեխանիզմի ստեղծմանը, որի առկայության դեպքում յուրաքանչյուր մարդ, կատարելով սոցիալական ներդրում, կապահովի սեփական պաշտպանվածությունը, որի չափը կորոշվի համապատասխան իր կատարած ներդրման: Այս իմաստով ապահովագրական մոծունների անհատական հաշվառման մեխանիզմը կարող է ապահովել այնպիսի պայմաններ, որոնց դեպքում աշխատողը համոզված կլինի, որ ինքը՝ նպաստ է «վաստակում» իր համար:

Այսպիսով, անհատական հաշվառման մեխանիզմի իրականացումը կնրպաստի ոչ միայն կենսաթոշակային ապահովության համակարգի, այլ նաև ողջ սոցիալական ապահովության համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում ուշադրության է արժանի նաև կենսաթոշակի հաշվառման կարգը: Սոցիալական օրենսդրության համաձայն, կենսաթոշակի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P = 2860 + k \times N, \text{ որտեղ}$$

P-ն կենսաթոշակի չափն է,

2860-ը հաստատուն մեծություն է, որը արտահայտում է բազային կենսաթոշակի չափը,

N-ը աշխատանքային ստաժի տևողությունն է,

k-ն աշխատանքային ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար տրվող հավելման չափն է<sup>7</sup>:

Կենսաթոշակի հաշվառման կարգը ինչպիսին էլ որ լինի, սահմանվող կենսաթոշակը հավանաբար պետք է հարաբերակցվի երկրում իրական կեն-

<sup>7</sup> ՀՀ կառավարության կողմից հաստատված աշխատանքային ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար տրվող հավելման չափերը հետևյալն են. 1-15 տարվա աշխատանքային ստաժի դեպքում յուրաքանչյուր լրիվ տարվա համար տրվող հավելման չափը հավասար է 35 դրամի, 16-30 տարվա աշխատանքային ստաժի դեպքում՝ 45 դրամի, 31-60 տարվա աշխատանքային ստաժի դեպքում՝ 60 դրամի:

սամակարդակին: Սակայն այսօրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած բազային կենսաթոշակի չափը և դրան գումարած աշխատանքային ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար տրվող հավելման չափը (նույնիսկ 25-30 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում) չի ապահովում այդ հարաբերակցությունը: Հաշվառման ներկայիս բանաձևի համաձայն՝ աշխատանքային թոշակը միջին հաշվով տատանվում է 3610-ից մինչև 4060 դրամի սահմաններում, հետևաբար և չի համապատասխանում երկրում իրական կենսամակարդակին:

Նույն վիճակն է սոցիալական կենսաթոշակների դեպքում: Կենսաթոշակի չափը (ծերության, հաշմանդամության թոշակների և այլն) տատանվում է հիմնային կենսաթոշակի 100%-ից մինչև 120%, որը կարող է կազմել ապրուստի համար անհրաժեշտ գումարի մասը, բայց ոչ երբեք ամբողջը:

Բացի այդ, կենսաթոշակների հաշվարկման ներկայիս բանաձևն առայժմ թույլ չի տալիս նաև կենսաթոշակները շաղկապել աշխատանքային ներդրման հետ, իսկ ավելի ճիշտ՝ ապահովագրական ստաժի հետ: Այսպես, եթե աշխատողը 5000 դրամ աշխատավարձ է ստանում, ապա 25 տարվա աշխատանքային ստաժի դեպքում նրա կենսաթոշակը հավասար կլինի մոտավորապես 3835 դրամի: Եթե նա ստանում է 20000 դրամ աշխատավարձ, ապա կենսաթոշակը կլինի 3835 դրամ: Եթե նա ստանում է 50000 դրամ աշխատավարձ, ապա կենսաթոշակը կլինի նույնը՝ 3835 դրամ: Փաստորեն, այսօր, կենսաթոշակները նշանակելիս, հաշվի չի առնվում աշխատողների տարիների ընթացքում կատարվող պարտադիր ապահովագրական վճարները<sup>8</sup>: Ուստի մեկ անգամ ևս հաստատվում է այն փաստը, որ կենսաթոշակային ապահովության համակարգում դեռևս չի գործում սոցիալական արդարության սկզբունքը:

Այսպիսով, հաշվի առնելով կենսաթոշակների հաշվարկման ներկայիս կարգը՝ կարելի է եզրակացնել, որ կենսաթոշակային ապահովության համակարգը շարունակում է «բաշխող-հավասարեցնող» բնույթ կրել:

Կենսաթոշակային բարեփոխումների հաջորդ կետը կենսաթոշակի անցնելու տարիքի խնդիրն է: Ստորև բերվում է աշխատանքային կենսաթոշակ ստացողների կենսաթոշակային տարիքի սանդղակն ըստ տարիների<sup>9</sup>.

*Աղյուսակ 1*

**Կենսաթոշակային տարիքի փուլ առ փուլ բարձրացումը**

տարին	տղամարդ	կին	տարին	տղամարդ	կին
1996	60,5	55,5	2004	64,5	59,5
1997	61	56	2005	65	60
1998	61,5	56,5	2006	65	60,5
1999	62	57	2007	65	61
2000	62,5	57,5	2008	65	61,5
2001	63	58	2009	65	62
2002	63,5	58,5	2010	65	62,5
2003	64	59	2011	65	63

Աղյուսակից երևում է, որ 2011 թվականին տարիքային նշանագիծը կբարձրացվի մինչև 65 տարի տղամարդկանց համար և 63 տարի կանանց հա-

<sup>8</sup> Համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի՝ վարձու աշխատողների սոցիալական վճարների չափը կազմում է աշխատավարձի կամ դրան հավասարեցված եկամուտների 3%-ը:

<sup>9</sup> Աղբյուր՝ «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովման մասին» ՀՀ օրենք:

մար: Դա պայմանավորված է նախ և առաջ ժողովրդագրական իրավիճակով, աստիճանաբար ավելանում է տարեց մարդկանց թիվը բնակչության ընդհանուր թվակազմում, բնակչությունը ծերանում է: Դա իր հերթին փոխում է ապահովագրական մոծումներ կատարողների և կենսաթոշակներ ստացողների թվի հարաբերակցությունը՝ հատկապես ի վնաս առաջիկաների: Իսկ դա նշանակում է, որ սոցիալական ապահովագրության հիմնադրամի ծախսերն ավելանում են, մինչդեռ մուտքերը, փաստորեն, չեն փոխվում: Այս առումով հարկ է հիշեցնել, որ սոցիալական ապահովության նախարարության տվյալների համաձայն՝ 1996 թ. Հայաստանում զբաղված բնակչության և թոշակառուների թվի հարաբերակցությունը համարժեք էր 100:43: Այլ կերպ ասած՝ 2.3 աշխատող ապահովում էին 1 «ապառողի», որը գտնվում է սոցիալական դոտացիայի վրա: Մինչդեռ, միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ քիչ թե շատ ապահով է այն հարաբերակցությունը, երբ 10-11 աշխատող ապահովում են 1 «ապառողի»: Այսպիսով, պետությունը կենսաթոշակի անցնող տարեց մարդկանց թիվը կործատելու նպատակով փորձել է օրենսդրական միջոցներով փոփոխել կենսաթոշակային տարիքը՝ դրա ավելացման ճանապարհով:

Հարկ է նշել, որ կենսաթոշակի անցնող տարեց մարդկանց թիվը կրճատելու ձգտումը առաջ է քաշում նաև գենդերային անհավասարության խնդիր: Նախ և առաջ, ինչպես երևում է աղյուսակ 1-ից, կանանց համար տարիքային ցենզը նախկինի համեմատ բարձրանում է 8 տարով, իսկ տղամարդկանց համար՝ ընդամենը 5 տարով: Երկրորդ՝ կենսաթոշակային տարիքի նոր նշանագիծը տղամարդկանց համար ավելի շուտ է ուժի մեջ մտնում (2005 թվականից), քան կանանց, որոնց համար տարիքի փոփոխությունները շարունակվելու են մինչև 2011 թվականը: Փաստորեն, կենսաթոշակային տարիքի փոչ առ փոչ բարձրացման հետևանքով «տուժածների» շարքերում հիմնականում կլինեն կանայք:

Նույն տարիքային ցենզն է հաստատված նաև սոցիալական կենսաթոշակ ստացողների համար, միայն մեկ տարբերությամբ. տվյալ տարիքային նշանագիծը ուժի մեջ է մտնում արդեն 2001 թվականին:

Հատկանշական է, որ նմանօրինակ միջոցառումներն արդեն տալիս են իրենց արդյունքները: Այդ են վկայում աղյուսակ 2-ի տվյալները<sup>10</sup>:

Աղյուսակ 2

**Կենսաթոշակառուների թվաքանակը 1996 - 2000 թթ.**

Ռեցիպիենտի կատեգորիա	1996թ.	1997թ.	1998թ.	1999թ.	2000թ.
աշխատանքային կենսաթոշակառուներ	536505	526328	524783	509766	501711
սոցիալական կենսաթոշակառուներ	51075	50701	48149	47409	46687
զինվորական կենսաթոշակառուներ	19531	23123	22598	10931	11684
Ընդամենը	67111	587739	583047	568169	560082

Ինչպես տեսնում ենք, նկատվում է ոչ միայն թոշակառուների ընդհանուր թվի, այլև թոշակառուների առանձին կատեգորիաների թվաքանակի նվազեցման միտում:

Սոցիալական օրենսդրության բարեփոխումների մյուս կարևոր հիմնահարցը քաղաքացիների կենսաթոշակային արտոնությունների խնդրի լուծումն

<sup>10</sup> Աղբյուր՝ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ:

է: Պետք է նշել, որ երկարամյա ծառայության և առանձնահատուկ աշխատապայմանների կապակցությամբ կենսաթոշակներ ստացողների համար նախկինում գոյություն ունեցող արտոնությունները (օրինակ՝ հավելումներ) նոր օրենսդրությամբ չեն նախատեսվում: Պահպանված արտոնությունների շարքին կարելի է դասել այնպիսիք, ինչպիսիք են վաղ տարիքում կենսաթոշակի անցնելու և կենսաթոշակ նշանակելիս ստաժի արտոնյալ հաշվարկման իրավունքները: Իսկ երկարամյա ծառայության համար և որոշակի աշխատապայմանների առնչությամբ բուն կենսաթոշակը հաշվարկվում է այն նույն բանաձևով, որով հաշվարկվում են կենսաթոշակի մնացած տեսակները: Արտոնությունների կրճատման պատճառը միանգամայն ակնհայտ է: Սոցիալական ապահովագրության հիմնադրամը, լինելով կենսաթոշակների ֆինանսավորման միակ աղբյուրը և ունենալով սահմանափակ ռեսուրսներ, այսօր ի վիճակի չէ վճարելու ամեն տեսակի հավելավճարներ:

Կենսաթոշակային արտոնությունների հարցում մասնակի փոփոխություններ կարող են սպասվել սոցիալական ապահովագրության բարեփոխումներից, իսկ ավելի ճիշտ՝ այդ ոլորտի հետևյալ խնդիրների լուծումից.

- առաջինը, ինչպես արդեն նշվեց, ապահովագրվածների անհատական հաշվառման համակարգի ներդրումն է (այս մեխանիզմը հնարավորություն կտա վերահսկելու մարդու աշխատանքային գործունեությունը, մասնավորապես՝ աշխատանքային և ապահովագրական ստաժը, աշխատավարձը, աշխատանքի պայմանները և այլն),

- երկրորդը սոցիալական կենսաթոշակառուների և կենսաթոշակային համակարգից պետական նպաստների համակարգ տեղափոխումն է (սոցիալական արդարության սկզբունքի իրականացումը պահանջում է ապահովագրական համակարգի «մաքրում» արտոնյալներից),

- երրորդը՝ քաղաքացիների արտոնյալ կենսաթոշակային իրավունքի հրստակեցումը և նրանց կենսաթոշակի առանձին նշանակումն ու վճարումը (աշխատողների արտոնյալ խմբերի սոցիալական պաշտպանության միջոցները պետք է տարբերվեն սոցիալական ապահովագրության միջոցներից):

Տվյալ մարտավարական քայլերի ձեռնարկումը մի կողմից հնարավորություն կտա սոցիալական ապահովագրության հիմնադրամից պետական բյուջե տեղափոխել աշխատողների արտոնյալ խմբերի պաշտպանության պարտավորությունները, իսկ մյուս կողմից հիմք կստեղծի պետության կողմից տրվող սոցիալական երաշխիքների փաթեթի վերանայման համար:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ քաղաքացիների կենսաթոշակային ապահովման ոլորտում ՀՀ ներկայիս սոցիալական քաղաքականությունը միաժամանակ հիմնվում է երկու տարբեր ռազմավարությունների վրա՝ գոյատևման և զարգացման: Առաջինի առկայության մասին վկայում են պետության կողմից իրականացվող այն միջոցառումները, որոնք ուղղված են անցումային շրջանում հաղթահարելու բնակչության ծերացման ժողովրդագրական միտումը, կրճատելու սոցիալական երաշխիքները և ապահովելու սոցիալական պաշտպանության նվազագույն մակարդակը: Զարգացման ռազմավարության ապացույցը սոցիալական օրենսդրության մեջ կատարված փոփոխություններն ու լրացումներն են, որոնք արտացոլում են հասարակության մեջ շուկայական վերափոխումների ուղղվածությունը: Դա նախ և առաջ պետության կողմից պաշտպանության այլընտրանքային ձևերի գաղափարի ընդունումն է, քաղաքացիների ապահովագրական վճարումների անհատական հաշվառման համակարգին անցումը, սոցիալական ապահովագրության ֆինանսավորման սուբյեկտների շրջանակի ընդլայնումը:

Անշուշտ, գոյատևման ռազմավարությունը աստիճանաբար պետք է իր տեղը զիջի զարգացման ռազմավարությանը, եթե նպատակ է դրվել կառուցել շուկայական ուղղվածություն ունեցող պետություն: Առայժմ ստիպված ենք

փաստելու, որ զարգացման ուղղվածությունը բավական դանդաղ է կյանքի կոչվում համեմատած այն միջոցառումների հետ, որոնք ըստ էության ուղղված են գոյություն ունեցող սոցիալական խնդիրների ժամանակավոր մեղմացմանը:

Ի հարկե, Հայաստանում, ինչպես և անցումային տիպի մյուս հասարակություններում, կենսաթոշակային համակարգի բարեփոխումը երկարատև բնույթ ունի: Ժամանակ է պետք ինչպես վերափոխումների շոշափելի արդյունքների հասնելու, այնպես էլ հասարակության մեջ նոր գաղափարների, մոտեցումների տարածման ու հաստատման համար:

Պարզ է մի բան, որ շուկայական ուղղվածություն ունեցող Հայաստանում գործառնական առումով կենսաթոշակային ապահովման համակարգն աստիճանաբար պետք է ազատվի պետության մենաշնորհ կախվածությունից, իսկ կենսաթոշակի բուն իրավունքը, լինելով յուրաքանչյուր քաղաքացու հիմնարար իրավունք և կարևորագույն սոցիալական երաշխիք, պետք է ոչ թե շնորհվի, ինչպես նախկինում, այլ «վաստակվի»:

**А. Н. БАБАЯН - К вопросу о реформировании системы пенсионного обеспечения Республики Армения.** - В условиях перехода к рыночным отношениям проблема совершенствования системы пенсионного обеспечения граждан является острой и актуальной для Армении. Автор статьи анализирует основные положения социального законодательства республики и указывает на факты, свидетельствующие о стремлении государства следовать курсу рыночных преобразований в обществе.

В то же время анализ положений социального законодательства позволяет утверждать, что преобразования в сфере пенсионного обеспечения в настоящее время носят ситуативный характер, т.е. направлены на временное смягчение существующих социальных проблем.